

Բ Ա Ն Ա Ս Ի Բ Ա Կ Ա Ն

Յոյն-արեւելքի Հին-եկեղեցական աստուծաբանական գիտոքիւնը իւր ծալիման շրջանում (IV-V դր.)։ Նրա պլաստոր ուղղութիւնները եւ բնորու յատկութիւնները։

(Նարունակութիւն)

Յակայն Դ-րդ գարե եկեղեցական-պատմական դէպքերի ընթացքը չէ կարելի ամբողջովին դուրս բերել և ուզել հասկանալ Աղեքսանդրիայի և Անտիօքի գաղոցների ուղղութիւնների ընդհարման հոգի վերայի Խորասուզուելով այդ շրջանի գաւառաբանական շարժումների հստանքների և հետզհետէ նրանց դարպացման մէջ՝ դժուար չէ նկատել, որ նրանց մէջ գլխաւոր նշանակութիւն ունեցելէ Նիկելոյ հաւատորոշումների այն մեծամասնութեան խումբը, որ իւր կազմութեամբ միատեսակ չէր։ Նրա մէջ մտնող տարրերը, ինչպէս ցոյց տուեց հետագայ պատմութիւնը, միմեանց հետ կապուած էին, ինչպէս և առհասարակ հակառակորդ կուսակցութիւնների մէջ, հէնց միայն ընդդիմուգեր կուսակցութեամբ։ Եթե 356 թ.-ի մօտեքը նա ժամանակաւոր յաղթութիւն ձեռք բերեց Նիկելականի վերայ և նրա մէջ ներքին կազմալու ծումն սկսուեց, այն ժամանակ շատ շուտով էլ պարզուեցին նրա ուղղութիւնները կազմող հիմնական ձգտումները։ Խոկական արիոսականութիւնը իւր վերջնական եղանակացութիւնները Այն տեսլի և Եւնոմիայի անհամանմանութիւնից հանեց։ Ապա բաժանուեցին Որոգինէսեան ձախակողմեան ներկայացուցիչները, որոնք հաւատարիմ էին մնացել Որոգինէսի «ոտարագրելիութեան» (ցիօրծնապիա), որն ոռաջ պաշտպանում էր Նաև Կեսարիայի Եւսեբիոսը։ Կեսարիոյ Ակակիոսի առաջնորդութեամբ նրանք ընդունեցին «համանմանութեան» դաւանանքը (—Որդին նման Հօրը)։ Դրա հետ միասին Անկիւրիոյ 358թ. ժողովում կազմաւեց «համագոյութեան» (—Որդին նման և էակից Հօրը) բազմամարդ կուսակցութիւնը, —որի գլուխն անցան Բարսեղ Անկիւրացին և Գէորգ Լաւոդիկիացին։ Այս կուսակցութիւնը կամաց կամաց միացաւ Նիկելական գաւառների պաշտպանների հետ և երկրորդ Տիեզերական ժողովի ժամանակ վերջնականապէս ձուլուեց սրանց հետ, բայց առաջուց երեն միջից բաժանեց մի խումբ, որ կոչուեց հոգեմարտների կամ մակեդոնների կուսակցութիւն։ Հետեապէս, համագոյութիւնը ընդունողների մի մասը հակառած չէր Որդւոյ համա-

գոյութեան հետ ճանաչել և ս. Հոգւոյ համագոյութիւնը Եթէ աչքի առաջ ունենանք այս փառար, նմանապէս փելիսոփայական տարբերը համագոյականների վաւերադրբերի մէջ (Անկիւրիայի 358թ. ժողովի արձանադրութեանց մէջ), այն ժամանակ ընական կլինի եղբակացնել, որ համագոյականների մէջ կային Որոգինեղմի աջակողմեան ներկայացուցիչներ, որոնցից, գոնեա, մի մասը չէր կարող ս. Հոգւոյ սարադրեալ դրութեան մասին Որոգինեսի տեսութիւնից հրաժարուել*:

Վերջապէս, համագոյականների վարդապետութեան ընաւորութիւնը, նախընթաց վարդապետական գործունէութեան այն խմբի մի քանի փաստերի առընչութեամբ, որ յետոյ համագոյութիւն ընդունողների կուսակցութիւնը կազմեց, իրաւունք է տալիս նրա կազմութեան մէջ և իւր ուղղութեան էական տարբերութիւնների մէջ այն որոշ արտայայտիչներին տեսնել, որ ներկայացնում է ս. Խրինէոսի և Մեթոդիոսի տոտուածաբանութիւնը. վերջինը վկայում էր նրա կենունակութեան մասին հէնց արիստական վէճերի սկզբին: Այդ ուղղութիւնը, ի հարկէ, չանցայտացաւ, այլ ոկտուած կունը նրա ներկայացուցիչներին, որոնց թիւը շատ մեծ էր, ստիպեց իրենց մասնակցութիւնն ու ազգեցութիւնը բացայացել նիկուական—արիստական շարժումների շրջանի մէջ: Այդ խիստ պահպանողական ուղղութիւնն էր: որ ոչ թէ մերժում էր աստուածաբանական գիտութեան նշանակութիւնը, այլ սահմանափակում էր նրան, չէր թոյլ տալիս իւր վարդապետութիւնը քննելու փելիսոփայական աստուածաբանական տեսակէտով և չէր արտայայտում նրան փելիսոփայական աստուածաբանական բանաձների մէջ, այլ անհրաժեշտ էր համարում հաւատարիմ մնալ աւանդութեամբ ստացածին, խոսանվանել այն, ինչ որ սովորեցնում էր եկեղեցական աւանդութիւնը իւր հանգանակների մէջ: Աստուածաբանական մտքի այս տեսակի ներկայացուցիչները կազմում էին առաջին տիեզերական ժողովի անդամների մեծամասնութիւնը: Նրանք մերժում էին արիստականութիւնը, ինչպէս հերետիկոսութիւն, ուակայն և կատկածանքով էին նայում նոր քանաձներին և հաւատացողութիւններին, որ մտադրուած էր հաւատոյ մեկնաբանութեան մէջ մոցնել, համարելով այդ վատանդաւոր նորամուծութիւն, էին գաղափարներից հեռացումն: Նրանք ընդունեցին նիկուական հանգանակը, սոկայն ժողովից յետոյ շատ շուտով երեսում են

* Ученіе Оригена о св. Духѣ, см. въ изслѣдованіи проф. В. В. Болотова. Ученіе Оригена о св. Троїцѣ, стр. 364 сл.

Նիկիայի հակառակորդների շարքում, դանելով, որ ծմօօնօտօց բանաձեռք դայթակղեցուցիչ և վատանգաւոր է։ Նրանք նիկիական որոշումները եկեղեցւոյ իսկական վարդապետութեանը համեմատ հաւատոյ ճիշտ արտայայտութիւն չէին համարում։ Աստուածաբանական այս ուղղութեան եպիսկոպոսները 341 թուրի Անտիոքի ժողովում արգեն մեծամասնութիւն են կազմում, որտեղ, նիկիական հանգանակին հակառակ առաջ է է մզւում հնութեան հեղինակաւորութիւնը, այն, ինչի որ հէնց սկզբից հաւատալ ոսկորեցին։ Յետոյ նրանք համագոյականների կուռակցութեան մէջ մտան։ Չնայած նիկիական հանգանակի և նրա պաշտպանների դէմ եղած կուռին, ամբողջ ժամանակ նրանք խիստ եկեղեցական պահպանողական հողի վերայ էին կանգնած, որ ապացուցւում է երկրորդ Տիեզերական ժողովի ժամանակ ուղղափառների հետ անպայման միութեամբ, երբ, Կապպագովիկայի հայրելի աստուածաբանական երկերի շնորհիւ պարզուած եղաւ, թէ «Համագոյութիւնը» չէ առնում դէպի սարելականութիւն։ Այդ աստուածաբանական ուղղութեան իրեն խիստ ներկայացուցիչ հանդէս է գալիս ո, Կիւրեղ երուսաղէմացին։ Իւր հրապարակական վարդապետութեանց մէջ, որ արտասանուել են 348-ի մօտերքը, նա ոչ նիկիական հանգանակը և ոչ ծմօօնօտօց բանաձեռք գործ չէ գնում, այլ նրանց իրեն հիմք զնում է նրուսաղէմի եկեղեցւոյ հանգանակը, զգուշացնելով ունկնդիրներին, որ այդ հանգանակը մարդկային ձեռքի արդիւնք չէ և որ նրա իւրաքանչիւր խօսքը կարելի է ո. Գրքով հաստատել։ Ս. Գրքին համեմատ լինելը բաւական է։ Նա շատ խիստ կերպով վիճումէ Սարէլի և Մարկիանոսի դէմ*, որին կատկածում էր սարելականութեան մէջ, մերժում է նմանապէս արիստականներին, սակայն առանց պարզ ցոյց տալու նրանց։ Վարդապետութեան առանձին սկզբունքների մէջ նա խելացի վաստեր բերելուց չէ հրաժարւում, սակայն նա չէ տալիս այն, ինչ որ կարող էր յեշեցնել վարդապետութեան սիստեմը և չէ ցոյց տալիս նոյն իսկ ձդառւմն դէպի այդ։ Նրա կատեխիզական վարդապետութեանց մէջ չի կարելի որ և է վիլսովիայտկան դպրոցի ազգեցութեան ամենափոքրիկ հետք անդամ գանել—նա ամէն տեղ և ամենուրեք մնում է ճշմարիտ եկեղեցական գրող, որ հետեւում է եկեղեցական աւանդութեան։ 359 թ. Սելևկիայի ժողովում նա հանդէս է գալիս համագոյականների շարքում, իսկ երկրորդ Տիեզերական ժողովում մասնակցում է որպէս միանգամայն նրա ան-

գամներից մէկը: Ա. Կիւրեղ Երուսաղէմացու հրահանդները իրեւ անդնահատելի փաստաթղթեր, հաստատում են այն իրողութիւնը, որ Նիկուական հանգանակի հակառակորդների մէջ կային եպիսկոպոսներ, որոնք չեն համարձակւում գործ գնել Նիկուական հանգանակը, համարելով նրան ոչ ճշմարիտ հաւատի խակական արտայայտութիւն, թէև իրենք անպայման ուղղափառներ էին:

Աստուածաբանական գիտութեան պատմութեան մէջ վերին աստիճանի առանձնայատուկ դիրք բռնեց Մարկեղոսը Անկիւրացին: Սա միանգամայն մի կողմը մնաց եկեղեցական աստուածաբանական գիտութեան այն յուզմունքներից, որ աեղի էին ունենում Խրինէոսի ժամանակներից սկսած. Մարկեղոսը աղաւ էր այն բոլորից, ինչ որ նորագոյն աստուածաբանութիւնը տալիս էր, նա բողոքում էր գրա դէմ: Նա ոչ միայն ուղղում էր Որոդինէսին, այլ նրանից էլ յետ գնաց—մինչև Խրինէոս և նոյն խոկ Խանատիսու Մարկեղոսը զինւում է աստուածաբանական բոլոր մեթոզների դէմ և նրանց հիմնական մեղքը տեսնում է Պղատոնով և ընդհանրապէս Փելիսովիայութեամբ հրապուրուելու մէջ: Նա գիտակցօրէն ցանկացաւ միայն ո. Դրքի և առաքելական աւանդութեան վերայ յենուել և վերականգնել աստուածանչական մաքուր տերմինուզիւն: Նա նոյն խոկ դէմ էր հոգեսոր հայրերի հեղինակաւորութեան համար բերած անորոշ վիաստերին⁵: Սակայն Մարկեղոսը անուանարկեց իւր սեպհական մեթոզը այն հերետիկոսական մեթոզով, որից նրա աշակերտ Փօտը, ծայրայեղ եզրակացութիւններ արաւ: Աստուածաբանական այս տարօրինակ մտածողի խիստ ու շացած տեսութիւնները քեզ հետևողներ ունեցան և զօրեղ ընդգիմութիւն առաջ քերին կեսարիացի Նւսերիոսի և Ակակիոսի, էմիսացի Եւսեբիոսի և Եարսեղ Մեծի կողմից: Նիկիոյ Տիեզերական ժողովում նա խիստ կերպով պաշտպանում էր «Համագոյութիւնը» և Փօղովից յետոյնրա հաւատորոշումների պաշտպանների շարքում նշանաւոր տեղ բռնեց: Նա վայելում էր Նիկիոյ համարական ժողովում համակընքը, ուստի և իւր գայթակղութիւններով շատ գժուարութիւնների մէջ ձգեց ուղղափառներին, հաստատելով նրանց հակառակորդներին այն համազմունքի մէջ, թէ Նիկիոյ դաւանաբանութիւնը տանում է գէպի սարէլականութիւն:

Մինչև այժմ մենք խոռնեցինք այն աստուածաբանական ուղղութիւնների մասին, որոնք հանդէս եկան դաւանաբանա-

⁵ Prof. Th. Zahn. Marcellus von Ancyra. Ein Beitrag zur Geschichte Theologie Gotha 1867.

կան վէճերի մէջ, որ բունում էր քննելի ամբողջ շրջանը, որի ներկայացուցիչները զարդարեցին աստուածաբանական—գրական գործունեութիւն գլխաւորապէս ժամանակի հարցերի շրջանակում։ Սակայն Դա դարի երկրորդ կիսին դիտական կենդանութիւն առաջ եկաւ ֆամանակակից հետաքրքրութեամբ զարթնած ոչ միայն սկզբունքների աւելի խոր և լայն կերպով առաջ քերելով, այլ և բնդհանուր գետական աշխատանքներով, որի մէջ պարզապէս երեւում է ձգտումն քրիստոնէական հողի վերայ խօսքի ամենալայն մտքով գիտութիւն ստեղծելը, որը հին փելասովիայութեան օգնութեամբ գոյութեան ըոլոր կողմնի վերայ լոյս սփռել կարողանալ։ Այս ուղղութիւնն ունին անպայման Դիգիմոսը, Յարուեղ Մեծը, Ապողինարիոսը, Անտիոքացիք և առանձնապէս Գրիգոր Նիւոացին։ Այդպիսի հոսանք երեւում է մի անձնաւորութեան մօտ էլ, որի մասնակցութեան մասին ժամանակակից դառանարքանական կուիւների մէջ լուսութիւն է պահուած այն է, Էմինիայի (միւնիկիայում) եպիսկոպոս Նեմիզիոսի մօտ, որ Դարի վերջին կամ Երգի սկզբին գրել է «Մարդկային քնութեան մասին» (περὶ φύσεως ἀνθρώπου) շարագրութիւնը։ Այդ հոսանքը նշանաւոր է ոչ այնքան քրիստոնէական փելասովիայութեան պատմութեան մէջ իւր նշանակութեամբ, որքան իւր բնաւորութեամբ և որա հիմքում եղած ձգտումներով։ Նեմիզիոսի աշխատութիւնը շատ կտղմերով կապուած է հին փելասովիայութեան հետ։ այնտեղ մենք գտնում ենք նրա տերմինոլոգիան, վարդապետութիւնը և կարծիքները մշակուած մի ամբողջ սիստեմի մէջ և թափանցուած քրիստոնէական ոգով։ Նեմիզիոսը իւր աշխատութիւնների համար նիւթ վերցնում է զանազան ուղղութիւնների ներկայացուցիչներից, այսպէս՝ Պղատոնից, Արքատուելից, Էպիկուրեց, ստոյիկեաններից, նոր պղատոնականներից, Դալանուուից, սակայն և պարզապէս նախամեծարութիւն տալով Պղատոնին և նոր-պղատոնականութեանը։ Նա սովորում է նրանցից այն, ինչ որ օգտակար էր իրեն, որպէս զի մարդու քնութեան համար աւելի ուղիղ և կատարեալ հայեացք կազմել կարողանայ։ Բայց մի և նոյն ժամանակ նա հաւատարիմ է մնում քրիստոնէական վարդապետութեանը, ձգտում է երկուսն էլ համաձայնեցնել և միացնել միմեանց հետ, այն համոզմամբ, որ բնական և բացարձակ ճշմարտութիւնը միմիանց հակառակ լինել չեն կարող։ Ամբողջ ժամանակ նա մնում է քրիստոնէական հաւատի շրջանակի մէջ, երբէք չէ անցնում նրանից և քրիստոնէական վարդապետութեան հետ հակաճառութեան մէջ չէ մտնում։ Այսպիսով, չնայած նեմիզիոսի վարդապետութեան մէջ մտած տարրերի զանազանութեան, քրիս-

տոնէական կըօնը նրանց ներդաշնակութեամբ կապում է և ամբողջ սիստեմին հիմք է տալիս^{*}: Աւելի պակաս յաջողութիւն գտաւ Պալոմայիշիկի եպիսկոպոս Սինեզիոսի հեթանոս վիլխոսոփայութիւնը քրիստոնէութեան հետ միացնելու փորձը: Հոգով ճշմարիտ քրիստոնեայ լինելով, նա չկարողացաւ երբէք քրիստոնէական վարդապետութիւնը համաձայնեցնել պղատոնական վիլխոսոփայութեանը. նրա երկերը կըում են սինկրիտիզմի ընաւորութիւն—այն է՝ խառնուրդ հեթանոսութեան և քրիստոնէութեան: Եթէ աչքի առաջ ունենանք, որ Սինեզիոսը բացառիկ երեոյթ չէր կազմում, այն ժամանակ անհրաժեշտ է ընդունել, որ նա ներկայացնում է «հետաքրքիր օրինակ նոր—պղատոնականութեան և քրիստոնէութեան այն համաձայնեցման» (ակкомодացիա), որով քրիստոնէական և նոր պղատոնական տեսութիւնները այնպէս էին խառնուել միմիանց հետ մարդու գիտակցութեան մէջ, որ ոչ իրեն համար և ոչ կողմնակի հետախուզողի համար, համարեա, հնար չկար նրանց մէջ սահման գտնել» **:

Արիոսական զանազան խմբակցութիւնների միջի երկարատեւ կոլիները աստուածախօսական միտքը պահպանում էին խիստ լարուած զրութեան մէջ և նրա զօրեղ գործունէութիւնը վերին աստիճանի խիստ կարեոր հետեանքներ տուեց բացատրելու, բացայայտելու և հաստատելու համար եկեղեցական ճշմարտութեանը: Սակայն հերետիկոսական շարժումների անդադար ըռնկումները առաջացնում էին երկիւղ և ստիպում էին նրանց պատճառները վնարելու բնականաբար միաըն ուղղվածում էր դէպի այն անձնաւորութիւնը, որի գործունէութիւնը հէնց սկզբից առաջ էր բերում որքան զօրեղ սէր՝ նոյնքան էլ ոչ պակաս ատելութիւն—այն էդէպի Աղէքսանդրիայի ուսուցիչ Որոգինէոը, Նրա անունն արդէն կապում էին արիոսական հերետիկոսութեան հետ, մանաւանդ որ իրենք արիոսականները իրենց վարդապետութիւնը հաստատելու համար յենւում էին Որոգինէոի վերայի: Եւ իսկապէս պակաս չէին այնպիսի կէտեր+այնտեղ չափաւոր արիոսականութիւնը մօտենում էր Որոգինէոմին և կարծէք թէ ներկայացնում է նրա զարդացման շարունակութիւնը: Որոգինէոի դէմ, իրեւ արիոսական հերետիկոսութեան հօր և ժամանակի բոլոր գայթակղութիւնների մեջաւոր

* Domanski B. Die Psychologie des Nemesius. Münster 1900.

** Остроумовъ А. А., Синезій епископъ птолемандскій. Москва, 1879, стр. 12. Glover T. R. Life and Letters in the fourth Century, Cambridge 1901 №• 320—356.

Դաստի գարի վերջին բարձրացնում է իւր հզօր ճայինը Ախալքանի գիտնական եպիսկոպոս Խաղիմիանը, որ հանդէս է գալիս իրեւ ներկայացուցիչ այն ուղղութեան, որ անպայման դեռ շատ առաջ ներկայացուցիչներ ունէն եպիսկոպոսների, կղերթեկոնների, կրօնաւորների և աշխարհականների մէջ և որը վիճակովայութեան հողի վերայ գրեց աստուածաբանական դիտութեան իրաւունքի վճռական հարցը, և անցկացրեց միակողմանի աւանդութիւնը։ Նա աստուածաբանական ոչ մի դպրոցի չէր պատկանում, այլ լոկ ուղղամբառ դրող էր, որ ուղիղ գծով անց էր կացնում ժայրայեղ աջակողմեանների ձգտումները։ Նա լնքնությն դրող չէր և վախենում էր լնքնությն լինելուց։ ո. Խպիփանը ձգտումէ հաստատել իւր դիտական միտքը, ինչպէս խարիսխի, անպայման ճշմարիտ հիմունքների վերայ, ընդունումէ միայն հաստատուն եղբակացութիւններ և երես դարձնում այն վերացականութիւնից, որ աստուածաբանական ոկզբունքներ է դնում և աշխատում նրանց վճռել։ Ենքը շատ յաճախ բերումէ ո. Աթանասիև Կապլագովիկայի հայրերի տեսութիւնները։ Հաւատոյ դրծերի մէջնա ոչ մի զիջումն չէ ճանաչում, և կարծեքի ու իսկական դայթակողութեան մէջ, Որոգինէսի անպայման հետեւդների և նրա գիտութիւնը յարգողների ու արդիւնաւոր գիտական դրծունէութեան մէջ ոչ մի տարբերութիւն չէ գնում։ Խպիփանի Պանարիայի մի ընդարձակ մասը երեան է գալիս իրեւ եկեղեցական աւանդութեան առաջին վիճաբանական աշխատութիւն Որոգինէսի դէմ, որ բացումէր մեծ կոիւ եկեղեցւոյ մէջ աստուածաբանական գիտութեան դէմ։ Խսկապէս այստեղ խօսքը Որոգինէսի մասին չէ, որին ո. Խպիփանը ազատ իմաստուն, խեղճ ու փքուած մարդ է անուանում, որ զուր տեղը ադամանտեայ կոչումն է իւրացըել, այլ հելլենական կրթութեան մասին է, (չհայուած ու ամենա), եկեղեցական աստուածաբանական գիտութեան այն ուղղութեան մասին, որի իսկական նախահայր անուանում են Որոգինէսին։ «Ո՞քան դու լնքդ վնասուեցիր և ո՞քան ուրիշներին վնասուեցիր—դոչում է Խպիփանը։ Ի՞նչպէս դու խածուած ես սարսափելի չարանենդութեամբ, այոինքն հելլենական կրթութեամբ և ուրիշների համար էլ դու թոյն դարձար»։ «Դու, Որոգինէս, կուրացնելով քո միտքդ հելլենական կրթութեամբ, ժայթքեցիր թոյնը նաև քեզ հաւատացեալների վերայ և նրանց համար թունաւոր կերակուր դարձար, վնասելով նաև ուրիշ շատերին նրանով, ինչից որ լնքդ էիր վնաս կրել»*։ Նա արհամարհանքով է խօսում այն յանդը-

* Гл. 68, 73. Русск. пер. 1872 г. ч. 3 стр. 206, 221—222

նութեան մասին, որով Որոգինէսը պարծենում էր հետախուզել անքննելի առարկաները, երկնային իրեր լինութել և բացատրել ամբողջ ս. Գիրքը, որը և նրան խորին անկման հասցըեց^{*} Առանձնապէս խիստ կերպով ս. Խլիփանը յարձակւում է ս. Գրքի բացատրութեան այլաբանական մեթոդի վերայ: Սակայն Որոգինէսի հեղինակաւորութիւնը, որ գիտական աստուածաբանութեան համար նշանաբան էր դարձել, եկեղեցւոյ մէջ շատ մեծ էր: Չնայած այդպիսի նշանաւոր մարդու կողմից, ինչպէս էր ս. Խլիփանը, նրա գէմ մզած կռուեին, և Հռովմի ու Աղէքսանդրիայի (399թ.) ժողովների ըանադրանքներին, նրա նշանակութիւնը անդրդուելի է մնում համարեա եկեղեցական լայն շրջաններում նոյն իոկ Եւրոպ դարի առաջին կիսին, ինչպէս այդ կարելի է տեսնել Սոկրատի «Եկեղեցական պատմութիւնից»^{**}:

Այդպիսով շրջանի վերջը եկեղեցական աստուածաբանական գիտութեան մէջ պարզ կերպով արտայայտուած երկու ուղղութիւններ մնացին—Աղէքսանդրիայի և Անտիոքի, Երկուան էլ մեղմացած գրութեամբ, և որպէս նախացուցմունք ապագայի նկատմամբ, միակողմանի աւանդական հոսանք աստուածաբանական գիտութեան դէմ իւր ընդդիմադիր կուսակցութեամբ:

(շարունակելի)

Արտակ վարդապետ

ԲԱԴԱ. ԳԻՒՂԻ ՍԻԵՐՈՒՄԸ

ԺԱ.

Սայօդ լուրեր. Գագիկ ուսուցչի դարձր. Հայերի չուն դեպի Վերին Այվիու զմւդը, Նոր յարձակումն Զարդախլուի վերայ. Բեկերի գաղտնի խորհրդակցութիւնը Կարաբեզովի մօս եւ նրա որուեումները: Սարգիս Արաբաջեանի դեսպանութիւնը. Ժանդարմների պետի կարգադրութիւնը եւ հայերի նանապարհողութիւնը դեպի Զագեամ կայարանը եւ դեպի Թիֆլիս եւ դարձ:

Նաըեշար արկածների օրեր էին այդ ժամանակ, սուտ ու զորդ լուրեր էին տարածւում ամէն կողմի վերայ, մթնոլորտը լի էր նրանցով: Ասում էին, որ Ալլահեար քէդ Զիւլդադարովը

* Гл. 8 и 3. Русск. перев. ч. 3. стр. 98, 83—84.

** См. напр. III, 23, VI 7; VI 13; VII 6.